

Թէսո Պէրպէրեանի չնորհալի գրչի բոլոր լատկութիւնները  
ամմիոփիէ իւր մէջ. ափսոս, որ մենք չենք կարդում Տաճկահ ու  
գրողների հեղինակութիւնները և շատ վայրի վերոյ դաշտախար  
ունինք նոցա մասին Ժամանակ չէ արդեօք սկսելու:

## ԲՐԻԶ

ԴԱԲՐԻԷԼ ՍՈՒԽԴՈՒԿԵԱՆՑ. **ՊԵՊՈ:** Կօմնդիա երեք  
արարուածով. Բ. տպ. ուղղած. Թօքլիլ. տպ. ՄԿ.  
Մարտիրոսնայցի. գ. 50 կ. էջ XІV+122.

Մեր ծերունակարդ, տաղանդաւոր թատերագիր Գ. Սուն-  
դուկեանի գլուխ գործոցն է «Պէպօն». և իրաւամբ վակելում է  
ամբողջ աղդի համակրութիւնը. 1901 թ. Ապրիլի 30-ին լրա-  
ցաւ Պէպօն ներկալացման 30 ամեակը. հայ հասարակութիւնն  
ամեն տեղ հանդիսաւոր կերպով տօնեց ալս դասական դը-  
րուածքի ներկալացման երեսնամեակը և այդ առիթով իւր  
խորին լարգանքները մատուց ալեզարդ հեղինակին. Առան-  
ձին շքով և հանդիսաւորութեամբ աօնեցին ալդ լոքելեանը  
Թիֆլիզի հայ, վրաց և ռուսաց թատրոնական բեմերը:

«Պէպօն» գեղեցիկ և ծշրիտ նկարագիր է Թիֆլիզի «կին-  
տօ», «պաժարնի» կոչուած ու ամենքից արհամարհուած դա-  
սակարգի կենցաղի և բարոյական զաղափարների:

«Պէպօն» տպագրութեամբ առաջին անգամ լուս է տեսել  
1876 թ. և ալժմ միան լուս է տեսնում երկրորդ տպագրու-  
թեամբ. Ալսպիսի մի ժողովրդական ու ամենքին սիրելի դար-  
ձած գրուածքի ալսքան քիչ տարածուելը և ալսքան ուշ երկ-  
րորդ տպագրութեամբ լուս տեսնելը նորից ապացուցանում է,  
որ մեր ժողովուրդը չէ սիրում թատերական դրուածքների  
ընթերցանութիւնը, թէ բեմի վրայ դրանց ներկալացումը  
տեսնելիս՝ չախաղանց ոգեսրութիւն է արտալայտում:

Դրքիս լառաջարանը, ինչպէս, և գիրքն ամբողջապէս նուիր-  
ուած է պ. Գէորգ Զմշկեանին, Պէպօնի տիպը մարմնացնողին, և  
նկարագրում է «Պէպօն» զաղափարը լրանալու հանգամանքները:  
Այս լառաջարանն ամբողջովին արտատպուած է գրքի առա-  
ջին հրատարակութիւնից:

Երկրորդ տպագրութիւնը մի քանի մանր փոփոխու-  
թիւններով է հրատարակել հեղինակը. ճիշդ է, դրանք մանր  
են, սակայն նրբութիւններ են արտալայտում. բերենք մի  
երկու օրինակ. երկրորդ արարուածի գ. տեսիլում էսինմիան  
ծառապին ասում է. «Ու դուն էլ էնէնց հաքի, վուր զիփու-  
նանց ամէն վրէն հայ...». հեղինակն այժմ սրբագրում է. «...վուր  
զիփունանց ամէն վրէն հայ...» (էջ. 45).

Նոյն արարուածի ու նոյն տեսիլի մէջ դարձեալ կիմի-  
ան ծառալին սսում է. «...Սէ խանկավ՝ խստակ, կարքի, քա-  
ղաքավարի տուն ու զուա կօնիս...», ալժմ հեղինակը բարուք-  
է համարել աւելացնել ալդ խօսքերին. «Թող բենին ու ճշկնին».  
(էջ. 46.) և ալլու.

«Պէպօն» թիֆլիզի բարբառով լինելով դրուած՝ հարկաւ  
ալսպիսի արտաւալութիւններ ունի, որ հասկանալի չի լինի  
ալդ բարբառը չդիմացողին. նամանաւանդ մի քանի ճայնաւոր-  
ների արտասանութիւնն եղանակը. հեղինակը ծանօթութեանց-  
մէջ բացատրում է ալդ տառերի արտասանութեան ձեր և  
թարդմանում է մի քանի պարսկերէն երգերը. Այս հանդա-  
մանքը շատ բնական գտնելով՝ թող ենք տալիս մեզ մի ա-  
ռաջարկութիւն անել լրագելի հեղինակին. «Պէպօն» ալժմ ոչ  
միայն թիֆլիզի բևմի զարդն է, ալլեւ մեր նորազոյն զրակա-  
նութեան թանկապին զանձերից մէկը. «Պէպօն» ալժմ ներ-  
կալացւում է և զաւառական հալ բեմերի վրաէ. մեր զաւառա-  
ցի երիտասարդներն էլ չատ անգամ ստանձնում են Պէպօն և  
կակուլու դերերը. չը որ զերակատարները պէտք է հասկանան  
թէ ինչ են ասում իրենց դերի մէջ. Պէպօն մէջ կան բաղմա-  
թիւ զուա թէ քէյուուն դոյն հասկանուք բառեր և կացչէն խօսքեր,  
որ անհասկանալի պէտք է մնան համաստ զաւառացիների  
համար. լաւ չըր լինի. որ ալդ բառերը գոնէ բացարուեին-  
ծանօթութեանց մէջ. Միս լն առաջին արարուածի մէջ մնաք-  
թուեցինք մօտ 35 ալդափիսի բառեր, որոնք անհասկանալի են  
միում ոչ թիֆլիզուն և վրացերէն չիմացողին. մի քա՞ի օրինակ-  
ներ, «Զ-ամ- ջո-քերերիք ինձ. (էջ. 2) է էկէ-» (էջ. 3) «-քէց» (էջ 8),  
«..Տօ, բա բայ հանաք է» (էջ 1) «վմ. բա բագէնոքեա, Պէպօն»  
(էջ. 16) «իննազմ» (էջ 16). «..բանը հ: շլլ է ըլում. էջ 18).  
«Քծաւ» (էջ 24), «..թէ աւրէ; ու չին կորչի և կու տեսնիս.» (էջ 24).  
«Ներոյք և թամաշա անիւ տան...» (էջ 2), «Երդնքէն  
առնիս ագէերն, (էջ 33) «Բաւալ», «Ասորչի» (էջ 37) «..Քինչ-կէ-  
չ վրա ինչով իս աւել» (էջ 38) և ալլն և ալլն:

Գրքի արտաքինը համապատասխանում է 'երքինին.  
ճաշակագէտ հեղինակը ջանք չէ խնալել, որպէս զի մաքուր-  
ու գեղեցիկ լինի հրատարակութիւնը. թուզթն ընափիր և տր-  
պագրութիւնը լաւ ափսոս միայն, որ զիրքը կազմուած չէ  
ինչպէս հարկն է. թերթերը ծալած դրուած են միայն և բանա-  
լիս իսկոյն թափթափուում են,

Ցանկանք, որ էրբետ տպահորութիւնը շւշդ և անթերէ-  
վնիւ.